ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

- Հաշվի առնելով անհրաժեշտությունը, 2021 թվականին ՄԱԶԾ-ի կողմից ստացված 1 հատ ՈՒԱԶ մեքենան՝ իր սարքավորումներով,որը համարվում է համայնքային սեփականություն, հարկավոր է անհատույց օգտագործման նպատակով հանձնել Սիսիանի ԲԿ-ին, 2021-2022 թվականներին <<Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ>> ՍՊԸ-ի կողմից նվիրատվությամբ ստացված 60 հատ 1100լ տարողությամբ պոլիէթիլենե աղբամանները, <<ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ>>-ի կողմից նվիրատվությամբ ստացված 10 հատ 1100լ տարողությամբ պլաստամասե աղբամանները, <<Տուրիզմի Հայկական Ֆեդերացիա>> ՀԿ-ի կողմից նվիրատվությամբ ստացված 9 հատ 1100լ տարողությամբ պլաստամասե աղբամանները անհատույց օգտագործման նպատակով հանձնել <<Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ին՝ համայնքում աղբահանություն կատարելու նպատակով, համայնքում առաջացող խնդիրների լուծման նպատակով համայնքային սեփականություն համարվող Т-130 թրթուրավոր տրակտորը, ՄԱԶ-490143-390 աղբատար մեքենան և էքսկավատոր բեռնիչը նույնպես հարկավոր է անհատույց օգտագործման նպատակով հանձնել <<Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ին,ինչպես նաև 2022 թվականին ձեռք բերված թվով 20 սեղանները անհատույց հանձնել <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ին:
- Որոշման նպատակն է համայնքային սեփականության գույքի արդյունավետ կառավարումը,պահպանումը և օգտակար ծառայության իրականացումը:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Դ. Այվազյան

21.11.2023թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային և եկամտային մասում փոփոխություն չի կատարվի:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Դ. Այվազյան

21.11.2023թ